

ՄՈՐԱԿՆԵՐԻ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՄՂԱՏԱՆԻ ՀԱՅՈՏ ԹԵՄԻ

ԺԱՆԱՐԻ, ԹԻՒ 97, ՅՈՒՆԻՍ-ՕԳՈՍՏՈՍ 2013



ՇՆՈՐՀԱԿԱԿԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ



Կիրակի՝ 2013 թականի օգոստոսի 11-ի երեկոյան ժամը 8-ին, Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի նախաձեռնությամբ, Ս.Ա. Վանք էին հրավիրել անցնող երկու տարիների ընթացքում Խորհրդի հետ համագործակցութիւն ցուցաբերած բոլոր ենթամարմինների անդամներն իրենց զոյգերով, ընդ որում Կրթական Խորհուրդը, Կալւածա-Տնտեսական, Բարեսիրական ու Գերեզմանատան Բարեգարդման մարմինները, Երիտասարդական Խորհուրդը եւ Ուսանողական Կրթաթոշակների Ցատկացման Հոգաբարձութիւնը: Ձեռնարկին ներկայ էին թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս.

Չարեանը, Թեմի Պատգամաւորական Ժողովի եւ Կրօնական Խորհրդի ատենապետները եւ Թեմական Խորհրդի անդամները:

Ծրագիրը կայացաւ Ս.Ա. Վանքի երկրորդ բակի շրջափակում, ուրախ եւ ջերմ մթնոլորտում: Միջոցառման առաջին բաժնում հանդէս եկաւ Թեմական Խորհրդի գործավար պրն. Արթին Մուրադեանը եւ բարի գալստեան ու ողջույնի խօսքերից յետոյ, ակնարկեց թէ ի՞նչ հիմունքներով ու նպատակներով է կազմակերպել նման միջոցառում: Ապա հրաւիրեց Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանին՝ արտայայտելու:

Պրն. Մինասեանն առաջին հերթին մէկ առ մէկ շնորհակալութիւն յայտնելով մարմինների բոլոր անդամներին ու նրանց պարագաներին, բարձր գնահատեց իւրաքանչիւրի կողմից կատարած աշխատանքները՝ պատկան ոլորտում, ապա հերթաբար անդրադարձաւ այն կարեւոր նաճումներին ու ձեռքբերումներին, որոնք ծրագրել ու իրագործել են յատկապէս անցեալ երկու տարիների ընթացքում, որոնց մասին էլ առանձնաբար անդրադարձաւ իւրաքանչիւր Մարմնի գործունէութեան ներքոյ: Իսկ վերջում երախտիքի ու շնորհակալութեան խօսքեր ուղղեց մարմինների բոլոր անդամներին, նաեւ նրանց պարագաներին՝ ազգային բնագաւառում իրենց գործ դրած ժամանակի, ճիգ ու ջանքերի համար, յաջողութիւն մաղթեց բոլորին, անկախ այն իրողութիւնից, որ յառաջիկայ երկու տարիների ընթացքում դարձեալ ընդգրկելու են որեւէ Մարմնի կազմում թէ ոչ:

Ապա հրաւիրեց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, ով նույնպէս իր շնորհակալական ու երախտիքի խօսքերում սրտի անհուն ուրախութիւն յայտնեց այդ մեծ թւով ազգայինների գործօն մասնակցութեան համար ազգային կեանքում, ովքեր ինքնակամ եկել են իրենց կարեաց սահմանում մեր ժողովրդի հոգսերն ու դժարութիւնները մասամբ մեղմացնելու եւ թեթեւացնելու, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ զոհաբերութիւն, ժողովրդանւէր եւ աստաճահաճոյ ծառայութիւն:

Արտայայտութիւններից յետոյ, հրաւիրեցին գերշ. Սրբազան Հայրը, Պատգամաւորական Ժողովի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետները՝ իւրաքանչիւր Մարմնի անդամի համար նախապատրաստած գնահատագրերը յանձնելու համար: Այսպիսով բոլոր մարմիններն իրենց ատենապետների ընկերակցութեամբ ներկայացան բեմահարթակ եւ Սրբազան Հօր ձեռամբ ստացան իրենց գնահատագրերը:

Ծրագրի պաշտօնական բաժինն աւարտելով, ներկաները մասնակցեցին օրւայ առթիւ կազմակերպւած համեստ հիւրասիրութեանը, ընդ որում հաճելի եւ մտերմիկ մթնոլորտում հինչեցին խօսքեր, մտահոգութիւններ, ասմունքներ եւ երգեր:



ՄԻՆԻՍՈՒԹԱՅԻ ՍՈՒՐԲ ԹՈՎՄԱՍ ԱՍՏԻԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԸՍԱՐԱՆԻ ՊԱՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՅԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ



Երեքշաբթի՝ 2013 թվականի օգոստոսի ճաշայ ժամը 12-ին, Ս. Ամենափրկչեան Վանք այցելեցին Ղոմ քաղաքի «Ջամէաթ-օլմոսթաֆա-ալալամիէ» խմբակցութեան կողմից կազմակերպած քրիստոնեայ (կաթոլիկ) - իսլամ (շիա) երկխօսութեան կապակցութեամբ երկրորդ համագումարին մասնակցելու նպատակով Իրան հրափրած Ամերիկայի Մինիսոթա քաղաքի Սուրբ Թովմաս աստուածաբանական համալսարանի չորս պրոֆեսոր, դոկտոր եւ դասախօսներ:

թեան իրաւունքներին եւ ազատութիւններին, շեշտելով, որ հայ համայնքը, որպէս Իրանի լիարժէք քաղաքացի, իր պարտաւորութիւններն ու պարտականութիւնները կատարում է ամենայն պատասխանատւութեամբ եւ լրջութեամբ, փոխադարձաբար վայելելով յարգանք եւ ուշադրութիւն՝ Իրանի պետական համակարգի եւ ժողովրդի կողմից:

Հանդիպման ընթացքում հիւրերը ներկայացրեցին պատիրակութեան Իրան այցելութեան նպատակը եւ գոհունակութիւն յայտնեցին, որ ականատես են լինում նման աշխատանքների եւ դրական գործունէութիւնների՝ միաստուածեան կրօնների միջեւ երկխօսութեան եւ համերաշխ կեցութեան զարգացման ուղղութեամբ:



Խումբը Առաջնորդ Սրբազան Հօր ընդունարանում հանդիպում ունեցաւ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի հետ: Հանդիպմանը ներկայ էր նաեւ Իրանի Իսլ. Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամատուր պրն. Ռոբերտ Բեգլարեանը:

Առաջնորդ Սրբազան Հայրը համապարփակ տեղեկութիւններ փոխանցեց Իրանում եւ յատկապէս Սպահանի Հայոց Թեմում ապրող հայ համայնքի կացութեան վերաբերեալ, անդրադառնալով իբրեւ քրիստոնեայ կրօնական փոքրամասնութիւն հայու-



Պատիրակութիւնը պաշտօնական հանդիպումից յետոյ, այցելեց «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ Ս. Ամենափրկչեան Վանքի «Խաչատուր Կեսարացի» անուան թանգարան, հիանալով պատմական կոթողով եւ թանգարանային արժէքաւոր իրերով:

Վերջում, թանգարանի մուտքի առջեւ հաւաքաբար լուսանկարելուց յետոյ, պատիրակութիւնը հրաժեշտ տուեց Առաջնորդ Սրբազան Հօրը եւ պրն. Բեգլարեանին:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ՝ ԱՆՑՆՈՂ ՄԷԿ ՏԱՐԻԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Երիտասարդութիւնը՝ որպէս հասարկութեան զգայուն խաւ եւ ապագայի ջահակիր, միշտ ուշադրութեան կենտրոն է եղել եւ նրա առջեւ ծառայած դժարութիւնների փարատման համար ո՛չ միայն ընտանիքները, այլեւ պատասխանատու անհատներն ու պետական պաշտօնատարները փորձել են գտնել ամենաիրատեսական ելքերը, այն համոզումով, որ առողջ սերունդը կենսական նշանակութիւն է ունենալու հասարակութեան գոյատեւման եւ բարգաւաճման գործում:



Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհուրդը, ազգային մարմինների եւ երիտասարդների միջեւ կապերը աշխուժացնելու, ազգային կեանքին նրանց հաղորդակից դարձնելու, երիտասարդների բարոյա-հոգեբանական, կրթական, աշխատանքային եւ կենցաղային այլ խնդիրներին առաւել ծանօթանալու ու դրանց վերացման համար Թեմի երկարաժամկէտ եւ կարճաժամկէտ ծրագրերում գործնական միջոցներ խորհելու նպատակով՝ 2012 թականի յուլիսին, կեանքի է կոչել Երիտասարդական Խորհուրդ, որին անդամակցում են Թեմի երիտասարդական կառույցներ՝ «Ռուբէն» Երիտասարդական Միութեան եւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ուսանողական Միաւորի ներկայացուցիչները, Ծահինշահրի հայ համայնքի ներկայացուցիչը եւ Թեմական Խորհրդի կողմից նշանակած անհատներ: Սոյն Խորհրդի անդամներն են Աբրահամ Յովսէփեանը, Մանէ Թահմազեանը, Նարբէլ Ջարդն Դաւուդը, Սելին Ղարիբեանը, Ռուբէն Մինասեանը, Դուրան Տէր Յովհաննիսեանը, Նարեկ Խաչիկեանը, Սարիկ Ղազարեանը եւ Սանասար Թահմազեանը:

Երիտասարդական Խորհուրդը կեանքի կոչելու առաջին պահերից, ստանալով Թեմական Խորհրդի նախատեսութիւնները, անմիջապէս անցաւ աշխատանքի, իր տրամադրութեան տակ ունենալով նաեւ նախկինում երիտասարդների հարցերով զբաղող յանձնախմբի կողմից առաջարկած փաթեթը: Յատկանշական է, որ երիտասարդների հարցերով զբաղող յանձնախումբը նոյնպէս ժամանակին կեանքի էր կոչել՝ երիտասարդութեան խնդիրներն ուսումնասիրելու նպատակով:

Որպէս առաջնահերթ աշխատանք, Խորհուրդը կատարելով Թեմական Խորհրդի յանձնարարութիւնը՝ զբաղւեց զբօսաշրջիկութեան գործակալութեան ընդհանուր ծրագրի ուսումնասիրութեամբ՝ Նոր Զուղայի տեսարժան վայրերում մեծաթիւ այցելուներ ապահովելու նպատակով: Մասնագիտական ու լուրջ ուսումնասիրութիւններից յետոյ, եւ օգտուելով «Մշակութային Ժառանգութիւն» կազմակերպու-

թեան մասնագէտների խորհուրդներից, կազմւեց համապատասխան ծրագիր, որը յանձնել է Թեմական Խորհրդին առի հաստատում: Խորհրդի ներկայացուցիչները զբօսաշրջիկութեան ոլորտին առաւել ծանօթանալու նպատակով 2012 թականի սեպտեմբերին, Թեմիանում մասնակցելով Պետական ռադիօ-հեռուստարձկերութեան միջազգային համագումարների կենտրոնում կայացած «Ջարգացող երկրների զբօսաշրջիկութիւնը» թեմայով համագումարին՝ օգտաշատ տեղեկութիւններ ձեռք բերեցին այս առնչութեամբ:

Անցնող ժամանակաշրջանում Երիտասարդական Խորհուրդը մօտից ուսումնասիրելով հայոց ազգային դպրոցներում առկայ մի շարք դժարութիւններ, դրանց լուծման ուղղութեամբ իր առաջարկած փաթեթը նոյնպէս փոխանցել է Թեմական Խորհրդին՝ համապատասխան մարմնին տրամադրելու համար:

Ծրագրուել է նաեւ պարբերաբար կազմակերպել հանդիպումներ Թեմի երիտասարդների հետ՝ նրանց մտահոգող խնդիրները քննարկելու նպատակով: Եւ այս ուղղութեամբ Խորհրդի առաջին հանդիպումը կայացաւ 2013 թականի փետրւարի 19-ին, որին հրաւիրել է ներկայ էին Ծահինշահրի եւ Նոր Զուղայի միութիւնների ու երգչախմբերի երիտասարդ վարչականներն ու անդամները: Սոյն հանդիպման ընթացքում նախ տեղեկութեան կարգով ներկաներին զեկուցւեց Խորհրդի կատարած աշխատանքները, այնուհետեւ երեկոն ընթացաւ մտքերի փոխանակմամբ եւ ներկաներն իրենց տեսակէտներն ու առաջարկները փոխանցեցին կրթական եւ աշխատանքի ոլորտների ու ազգային իշխանութեան կապակցութեամբ: Այս խորհրդակցական հանդիպման առաջարկները Խորհրդի ապագայ ծրագրերի մշակման հիմք են հանդիսացել:

Ուժ ու կորով ենք մաղթում Երիտասարդական Խորհրդի անդամներին եւ լիայոյս ենք, որ ուսումնասիրած ու կառուցողական ծրագրի միջոցով բարձրագոյն ուսում ստանալու եւ զարգանալու լայն ենթահող է ստեղծւելու Թեմի երիտասարդների համար:

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ Ս. ԱՍՏԻԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ



Կիրակի՝ օգոստոսի 18-ի առաւօտեան, հանդիսատրութեամբ նշեց Հայ Եկեղեցու հինգ տաղաւար տօներին չորրորդը՝ Ս. Աստուածածնի Վերափոխման տօնը, Նոր Զուղայի Ս. Աստուածածին եկեղեցում՝ մատուցելով սուրբ եւ անմահ Պատարագ, որին յաջորդեց աւանդական Խաղողօրհնէքի արարողութիւնը: Ս. Աստուածածին եկեղեցու Ս. Պատարագին, որը նաեւ նշած եկեղեցու անանակոչութեան տօնն էր, նախագահում էր Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, օրւայ պատարագիչն էր արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը, իսկ երգեցողութեամբ մասնակցում էր Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Յընթացս Ս. Պատարագի Առաջնորդ Սրբազան Հայրն իր հայրական պատգամն ուղղեց ժողովրդին, որում անդրադառնալով «Հայ Մօր Տարւան» եւ Աստուածամայր Ս. Կոյս Մարիամին՝ որպէս մայրութեան տիպար, ասաց. «Ն-Ս-Օ-Տ-Տ. Արամ Ա Վեհափառը 2013 թվականը «Հայ Մօր Տարի» հռչակելով՝ ցանկացաւ, որ մենք առաւել ուշադրութիւն դարձնենք մօր առաքելութեանը, աշխատանքին, սրբութեանն ու անարատութեանը: Այսօր կոչ ենք ուղղում բոլոր մայրերին, կանանց եւ աղջիկներին, ովքեր ապագայում մայր պէտք է դառնան, որ իրենց կեանքի ուղեգիծը եւ օրինակը դարձնեն Ս. Կոյս Մարիամին, ով հնազանդելով աստուածային կոչին՝ սիրոյ, խոնարհութեան, նւիրումի եւ գոհողութեան խորհրդանիշը դարձաւ: Թող մեր մայրերը դառնան դաստիարակ՝ իրենց զաւակների համար, ինչպէս դարձաւ Ս. Կոյս Մարիամը: Թող մեր մայրերն առողջ զաւակներ դաստիարակեն՝ վաղևայ համար,

որպէսզի մեր ազգը հպարտանայ ու զօրանայ եւ մեր եկեղեցին պայծառանայ»: Այնուհետեւ Սրբազան Հայրը շնորհատրելով Ս. Աստուածածին եկեղեցու անանակոչութեան տօնի կապակցութեամբ, անդրադարձաւ քիչ յետոյ կատարելիք Խաղողօրհնէքի արարողութեանը եւ ասաց. «Խաղողօրհնէքը հեթանոսական սովորութիւն լինելով հանդերձ, իր մէջ ընդգրկում է քրիստոնէական իմաստ: Մենք պտուղների մայրը՝ խաղողը, օրհնում ենք եկեղեցիներում, որովհետեւ այն դառնում է գինի եւ օգտագործւում պատարագներում՝ որպէս Քրիստոսի արեան խորհրդանիշ»:



Յաւարտ Ս. Պատարագի, բարեպաշտ ժողովրդի միջոցով եկեղեցի բերած խաղողն օրհնեց թեմակալ առաջնորդի ձեռամբ, որից յետոյ այն բաժանեց ներկաների միջեւ:



Թեմի միւս եկեղեցիներում նույնպէս նշեց Ս. Աստուածածնի Վերափոխման տօնը: Օրւայ պատարագիչներն են եղել՝ Շահինջահի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում՝ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, Նոր Զուղայի Ս. Մինաս եկեղեցում՝ արժն. Տ. Վաղինակ աւ. քհնյ. Շահինջանեանը, Ս. Ստեփանոս եկեղեցում՝ արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը եւ Ս. Յովհաննու եկեղեցում՝ արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը:

Տօնի առիթով ուրբաթ՝ օգոստոսի 16-ի առաւօտեան, նախագահութեամբ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի եւ ձեռամբ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանի, բազմահարիւր ուխտաւորների մասնակցութեամբ, Խոյզան գիւղի Ս. Աստուածածին եկեղեցում տեղի է ունեցել սուրբ եւ անմահ Պատարագ ու Խաղողօրհնէքի արարողութիւն:

Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲՆ ԻՐ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԵՐԳՈՎ ԲԱՐՁՐԱՃԱՇԱԿ ԱՐԻԵՍՏՐ ՄԱՏՈՒՑԵՑ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻՆ



Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը, ղեկավարութեամբ խմբավար Արմէն Ամիրխանեանի, հինգշաբթի՝ օգոստոսի 1-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեկունջ Տէրեան» սրահում, բացառիկ կատարմամբ իրականացրեց իր տարեկան համերգը: Գեղեցիկ արւեստով ողողած այս ձեռնարկին ներկայ էին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Շահինշահի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, արժն. Տ. Մեսրոպ քհնյ. Գալստանեանը, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի, հայոց դպրոցների ու միութիւնների ներկայացուցիչներ եւ համայնքի անդամներ:

սոյն համերգը նույնպէս գեղեցիկ արւեստի պայթիւն կոչեց եւ յայտարարեց, որ ամբողջ երեկոյի ընթացքում հնչելու են նոր երգեր: Յատկանշական է, որ ծրագրի ընթացքում հանդիսավարի միջոցով երգերի եւ հայ անւանի կոմպոզիտորների առնչութեամբ հետաքրքիր տեղեկութիւններ փոխանցեցին հանդիսատեսին:



Սկզբում երգչախմբի արհեստավարժ անդամներն երեկոյի բացումը կատարեցին «Et incarnatus» երգով, որից յետոյ ողջոյնի եւ բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ օրայ հանդիսավար Կարին Տէր-Մարտիրոսեանը: Նա արւեստի աշխարհում տեղի ունեցող պայթիւնները մարդկութեան համար բարեբեր համարելով՝

Այնուհետեւ երգչախմբի կատարմամբ հնչեցին Կոմիտասի «Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք», Աշոտ Ղազարեանի «Լցաք առաւօտու», Ռոբերտ Պետրոսեանի «Գետի երկու ափերին», Անուշաւան Տ. Ղետնդեանի (խօսք՝ Աւետիք Իսահակեանի) «Ուտենի», Վարդ Մանուկեանի (խօսք՝ Յովիկ Հովեանի) «Կէսգիշերային մեղեդի», Էմին Արիստակէսեանի (խօսք՝ Իւրի Սահակեանի) «Հայոց պար», Էդգար Յովհաննիսեանի

(խօսք՝ Վահան Տէրեանի) «Ես չեմ մոռանում», Էդգար Յովհաննիսեանի մշակմամբ «Երկինքն ամպ է, հովն անուշ», Աշոտ Ղազարեանի (խօսք՝ Աւօ Գաթրջեանի) «Հայդուկին» եւ Ալեքսանդր Յարութիւնեանի (խօսք՝ Լուիֆո Դուրեանի) «Մայր Հայաստան» երգերը: Հարկ է նշել, որ երգահան Աշոտ Ղազարեանն իր ստեղծագործութիւններից «Հայդուկին» երգը նւիրել է «Կոմիտաս» երգչախմբին եւ խումբը սոյն երգն առաջին անգամայ համար հնչեցրեց հանդիսատեսի ներկայութեամբ:

Գեղարուեստական երեկոն եզրափակեց Առաջնորդ Սրբազան Հօր հայրական խօսքով: Նա տքնաջան աշխատանքը գերազանց արդիւնքի հաւասար համարելով՝ ելոյթի կապակցութեամբ դուրսանալով արտայայտեց եւ ասաց. «Այսօր վայելեցինք երգչախմբի գեղեցիկ ելոյթը՝ խորհրդաւոր, ուսումնական եւ միեւնոյն ժամանակ հօր երգերով, որոնք մեզ յուզեցին, յիգբաւորեցին եւ առաւել կապեցին մեր արժէքներին, սրբութիւններին ու հայրենիքին»: Թեմակալ Առաջնորդն իր խօսքի աւարտին իր եւ Թեմական Խորհրդի անունից գնահատելով երգչախմբի անդամների եւ ղեկավարի կատարած աշխատանքը՝ անելաց-



րեց. «Տա՛յ Աստուծ, որ Նոր Զուղայի այս երգչախումբը Սփիւռքի բեմերում եւս նման ելոյթներ ունենայ, որպէսզի միւս համայնքները հայ երգը լսեն մասնագիտական եւ մակարդակով այս երգչախմբի կատարմամբ»:



ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՅԱՂԹՈՂԸ ՃԱՆԱԶԻԵՑԻՆ



Օգոստոսի 7-ին, Նոր Զուղայի 13 աշակերտներ, ուսուցչուհիներ՝ Ռիմա Սիմոնեանի եւ Սեդա Դիլանջեանի գլխավորութեամբ, մեկնեցին Հայաստան՝ Հայագիտական Համահայկական 6-րդ Օլիմպիադային մասնակցելու նպատակով: ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան կազմակերպած սոյն միջոցաւմանն այս տարի մասնակցել էին 8 երկրներից 150 դպրոցականներ:

Հայագիտական Համահայկական 6-րդ Օլիմպիադան ընդգրկում էր հարցեր՝ հայոց լեզուից, գրականութիւնից, հայոց պատմութիւնից եւ հայ մշակոյթի պատմութիւնից, իսկ առաջին անգամը լինելով՝ անցկացեց նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու պատմութեան մրցոյթը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնէական Դաստիարակութեան Կենտրոնի հովանորութեամբ եւ աջակցութեամբ:

Օլիմպիադան տեղի ունեցաւ օգոստոսի 9-ից մինչեւ 15-ը՝ Ծաղկածորում եւ արդիւնքների ամփոփումից յետոյ, Նոր Զուղայի աշակերտներն իրենց բարձր պատրաստութեան շնորհիւ կարողացան վաստակելով բարձրագոյն թւով մրցանակներ՝ 8 դիպլոմ եւ 22 պատույզ գիր ու շնորհակալագիր, ճանաչել որպէս յաղթող եւ իրաւարար կազմի կողմից գնահատել որպէս ամենակազմակերպ եւ օրինակելի խումբը:

ՁԵՌԱՐԻՆՍՏԻ ՎԱՐՊԵՏ ԵՒ ՎԱՍՏԱԿԱԽՈՐ ՌԻՍՈՒՑՉՈՒՆԻ ԷԼԻԻՐԱ ԳԱԶԱՐԵԱՆԻ 85-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՐԻԱԾ ՁԵՌԱՐԻՆՍՏԻ ՅՈՒՑԱՀԱՆԳԷՍ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Վերջերս Նոր Զուղայում, ձեռարկեստի վարպետ եւ վաստակավոր ուսուցչուհի Էլիիրա Ղազարեանի ձեռարկեստի ցուցահանդէս կազմակերպւեց իր քրոջ՝ Դիանա Ղազարեան-Խաչիկեանի նախաձեռնութեամբ եւ հրաւիրեալների շրջանակում, որն առիթ հանդիսացաւ Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միատրի Վարչութիւնն եւս, ելնելով իր առաքելութիւնից, Նոր Զուղայի արեստը գնահատելու եւ արժեւորելու նպատակով ձեռնամուխ լինել Միութեան յարկի տակ Էլիիրա Ղազարեանի 85-ամեակին նկիրած՝ ցուցահանդէսը կազմակերպելու գործին, որպէսզի Նոր Զուղայի արեստասէր հասարակութիւնն եւս վաւելէր Էլիիրայի անձնական բացառիկ ցուցահանդէսը.

«Խօսում եմ անցեալից, որովհետեւ նա, այլեւս անկարող է նման մի աշխատանքի մասին մտածել, իսկ ես շատ խորը յուզմունքով, փորձել եմ նրա ցանկութիւնն իրականացնել»:



Եւ իրօք որ, այցելուներն էլ հիացումից բացի, մեծ եւ խոր յուզմունքով դիտեցին Էլիիրայի այդքան մեծ թուով եւ մէկը միւսից գեղեցիկ ու նրբաճաշակ գործերը, որը ո՛չ միայն իր տեսակի մէջ համարում էր եզակի մի ցուցահանդէս, այլ նաեւ նրանց մէջ արտացոլում էր նրա անսահման սէրը հանդէպ ծնողներից ժառանգած արեստին, մեծ համբերատարութիւնը, բարձր ճաշակը, նուրբ հոգին եւ անշուշտ 85-ամեայ վարպետի բեղուն կեանքի մի հատուածը:



բացառիկ, այն առումով, որ Նոր Զուղայում նմանատիպ մեծ քանակով ասեղնակարերի ու գործւացքների ցուցահանդէսներն իրականանում են խմբական աշխատանքներով, նաեւ այն, որ ցուցահանդէսում ներկայացած էր նրա ձեռարկեստի նմուշներից կազմւած գիրքը, որի պատրաստելու եւ տպագրելու աշխատանքը



ստանձնել էր նրա կրտսեր քոյրը՝ Դիանա Ղազարեան-Խաչիկեանը. «Մի աշխատանք, որը միշտ փափագել էր ինքը Էլիիրան: Նա, իր ձեռարկեստի սիրահարն էր եւ բնականաբար սիրում էր իր գործերը տեսնէր միատեղ ու արժեւորւած», - այսպէս է ասում գրքի «Երկու խօսք»ի մէջ տկն. Դիանան եւ ակելացնում.



Ցուցահանդէսը տեղի ունեցաւ, ուրբաթ յունիսի 28-ին, Միութեան սրահին կից դահլիճում:

**Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ.
«ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ
«ԼԵՒՈՆ ՇԱՆԹ»
ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ
ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ
«ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ԾԱՂԻԿ՝ ՄԻՆԻՈՐ
ՊԱՊԱԳԱՏՏՕՆ»
ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ**

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի «Լեւոն Շանթ» թատերախմբի նախաձեռնութեամբ, 2013 թականի յուլիսի 24-ին եւ 25-ին, Միութեան կենտրոնական սրահի բեմում բեմադրւեց «Հասարակութեան ծաղիկ սինիոր Պապագատտոն» կատակերգութիւնը՝ 3 արարով, որտեղ իրենց գեղեցիկ կատարումներով փայլեցին թատերախմբի դերասանները:



Սոյն ներկայացման համար թատերախումբն ամիսներից ի վեր ունեցել է խտացած փորձեր՝ բեմադրիչ Վիգէն Մովսիսեանի ղեկավարութեամբ:

Նախքան ներկայացման սկսելը, «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի «Կոունկ» ասուների խմբի անդամ Ալինա Տէր Սուքիասեանը ողջունելով ներկաներին, մի շարք տեղեկութիւններ փոխանցեց կատակերգութեան պիեսի մասին:

Պատմութիւնը ներկայացնում էր սինիոր Պապագատտոյի ընտանիքի թշուառ կեանքը, որտեղ ընտանիքի գլխաւորը՝ Պապագատտոն, իրեն հանճար համարելով, աշխատում էր ելքեր փնտրել՝

իրենց ապրուստը հոգալու համար: Նա մասնակցում էր անձանօթների ուրախութիւններին ու տխրութիւններին եւ ուտեստ հայթայթում: Եւ այդպէս այցելութիւններից մէկի ընթացքում առաջարկում է իր հանճարեղ միտքը՝ չքաւորներին օժանդակելու նպատակով մեծահարուստներից կոմիտէ կեանքի կոչելը: Այնուհետեւ դիմելով խորամանկութեան, սկզբում որպէս կարիքաւոր ընտանիք, բոլորին ծանօթացնում է Պապագատտոնների ընտանիքին:



Զարգանում են դէպքերը եւ մեծահարուստ ընտանիքներից մէկի որդին ականաջ յանցագործութիւն է կատարում ու ապաստան գտնում Պապագատտոնների տանը: Որոշ ժամանակ անց սինիոր Պապագատտոյին յաջողում է պարզել, թէ յանցագործութեան հեղինակը նոյն մեծահարուստի որդու խնամակալն է եղել, սակայն վերջում անգամ յանցագործութիւն է յայտնաբերում Պապագատտոնների տանը:



Սոյն ներկայացումը բեմականացւեց դերասանութեամբ՝ Զարեհուշ Աղուրեանի, Միշէլ Մուսախանեանի, Թանգիկ Բաղդասարեանի, Մանիֆա Պարսամեանի, Ալֆրէդ Միրջանեանի, Էջմին Խաչիկեանի, Հրաչ Տէր Յովհաննիսեանի, Յասմիկ Յովսէփեանի, Վիոլէթ Յովհաննիսեանի, Համլէթ Մինասեանի, Կարէն Խանլարեանի, Հայրուկ Վարդեանեանի, Դիւրէն Տէր Սուքիասեանի, իսկ գլխաւոր դերում Սինիոր Պապագատտոյի կերպարը մարմնաւորեց Վաղօ Տէր Սուքիասեանը: Որպէս յուշարարներ, խմբի հետ համագործակցել էին՝ Արագ Մարտիրոսեանն ու Արմինէ Կարապետեանը, իսկ դերասանների դիմաչարդարութեամբ զբաղւել էր Նայիրի Ղազարեանը:

Ընդհանրելով Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի Վարչութեանը, «Լեւոն Շանթ» թատերախմբի բեմադրիչին ու դերասաններին՝ գեղեցիկ բեմադրութեան համար, մաղթում ենք նրանց նորանոր յաջողութիւններ:

ÈÆê´ àÛÆ ÐÆÛ¶ ² ÜÒÛ² ¼àÐ Ø² ðì ÆÎ Û°ðÆ àÔæ² Î Æ¼Ø² Û
30-² Ø°² Î ÆÛ ÛðÆðð² Î Ò°è Û² ðÎ

Ուրբաթ՝ յուլիսի 26-ի երեկոյան ժամը 8-ին, նախա-
ձեռնութեամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան
Սկաուտական Միաւորի, տեղի ունեցաւ ձեռնարկ՝
նւիրաձ Լիսբոնի հինգ մարտիկների նահատակու-
թեան 30-ամեակին, ներկայութեամբ՝ Շահինշահրի հայ
համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ.
Գունանեանի, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի, ազ-
գային մարմինների ու «Արարատ» Միութեան Կեցու.
Վարչութեան ներկայացուցիչների եւ համայնքի ան-
դամների:

բացման խօսքը՝ կարեւորութեամբ նշելով. «Այս յուշե-
րեկոնները գալիս են լուսթեան պատերը քանդելու,
գալիս են ասելու թէ հայ երիտասարդութիւնը պատ-
րաստ է իր պայքարը շարունակելու իւրաքանչիւր օր,
որպէսզի համայն աշխարհին լսելի դարձնի, թէ
անարդարութիւն է գործել եւ հայ ժողովուրդը վե-
րբարձին սպասում է արդարութեան հատուցմանը»:



Սկզբում Սկաուտական Միաւորի երէց փաղանգի
պատասխանատու Ռոբերտ Սիմոնեանի հրահանգով՝
սրան մուտք գործեց դրօշակակիր խումբը՝ իր հետ քե-
րելով նաեւ մի ծաղկեպսակ: Քիչ յետոյ սրահում ծա-
ծանեց եռագոյն դրօշը, իսկ ի յարգանք հինգ անմահ
քաջորդիների՝ ծաղիկը տեղադրուեց նրանց պատկեր-
ների առջեւ: Ծրագրի այս բաժինն աւարտուեց Հայաս-
տանի Հանրապետութեան հիմնի ուկնդրութեամբ:

Ծրագրի շրունակութեան մէջ Սկաուտական Միա-
ւորի խօսքն ընթերցեց Գերագոյն Մարմնի անդամ՝
Հուրիկ Թահմազեանը, որտեղ ասած էր. «Հինգ մար-
տիկների կատարած գործողութեան կարգախօսը նոր
պատգամ է փոխանցում: Պատգամ ուղղւած թուր-
քիային՝ ընդունելու Հայոց Յեղասպանութիւնն ու վե-
րականգնելու արդարութիւնը: Պատգամ ուղղւած
հայ երիտասարդութեանը՝ իր ազգային դիմագիծը
պահելու եւ պահանջատէր ու մարտունակ դառնա-
լու: Պատգամ ուղղւած հայ ազգին՝ պահանջատիրա-
կան իր պայքարի մէջ միասնակամ ու անզիջող մնա-
լու եւ սատարելու հայրենիքի վերելքին»:



Այնուհետեւ Արեւուշ հատուածի պատասխանատու
Նայիրի Թահմազեանը ներկաներին հրաւիրեց մէկ րո-
պէ յոտնկայս լութեամբ յարգելու անձնագրի մար-
տիկների յիշատակը, որից յետոյ ընթերցեց ծրագրի

Ապա օրւայ խորհրդի առնչութեամբ արտայայտեց Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգձ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը: Նա անդրադառնալով 1983 թականին Լիսբոնում կատարած իրադարձութեանը եւ այն մեծ ազդեցութեանը, որը հինգ անամհների կատարածը թողեց հայ երիտասարդի նկարագրի կերտման վրայ, ասաց. «Գործողութիւնն այնքան ցնցիչ էր, որը ոչ միայն աշխարհասփիւռ պահանջատէր հայութիւնը, այլեւ հայկական իրաւունքն ու արդարութիւնն ուրացող Թուրքիան ու մեծապետական ուժերը սահմուկեցին»: Ապա հանրային կարծիքը լուսաբանող Հայ Յեղափոխական Բանակի հաղորդագրութիւնից եւ Լիսբոնի հինգի խօսքերից հատուածներ

նի անփոխարինելի մղումը՝ դէպի Լիսբոնի գերագոյն գոհարերութեան բազինն առաջնորդեց Սաքրոյի, Սեդրակի, Սիմոնի, Արայի եւ Վահէի քայլերը»:

Հոգձ. Հայր Սուրբն իր խօսքի աւարտին աւելացրեց. «Պահնջատիրական մեր երթը պիտի շարունակուի նոյն թափով ու վճռակամութեամբ, այնքան ժամանակ, քանի դեռ գերլած է Արարատը, խլած է Անին եւ անտէր է Ախթամարը: Թող համաշխարհային հանրային կարծիքը մեզ արկածախնդիր կամ ոճրագործ կոչի, դա հոգ չէ: Սա ինքնասպանութիւն չէ, ոչ էլ խելագարութեան արտայայտութիւն, այլ մեր գոհարերութեան է ազատութեան խորանին»:

Բանախօսութիւնից յետոյ պատուաւի վրայ օրւան առնչող պատկերների ցուցադրմանը զուգընթաց, խօսքեր ընթերցեցին արեւուշներ՝ Անի Ղազարեանի, Նարեգա Սիմոնեանի եւ Վանիա Պետրոսեանի միջոցով՝ ներկայացնելով հայ երիտասարդի ապրումները, յոյզերը եւ պահանջատիրական ոգին:



մէջբերելով՝ շարունակեց. «Փաստօրէն 27 յուլիս 1983 թականին, Լիսբոնի մէջ հինգ հայ երիտասարդների ողջակիզմամբ, համայն մարդկութիւնը բացեց իր աչքերը եւ անդրադարձաւ այն խոր վէրքին, որը 1915 թականին թրքական պետութեան ցեղասպանական ոճիրով առաջացել է հայ ժողովրդի եւ հայ մարդու էութեան մէջ: Որքան տարիներ են անցել, այնքան Լիսբոնում կատարւած անձնագոհութիւնը շարունակել է ողջ էութեամբ ցնցել մեզ: Եղեռնից վերապրած



Այնուհետեւ իրագործեց գեղարեստական բաժինը, որտեղ Սկաւտական Միաւորի անդամների գեղեցիկ կատարումները խորապէս յուզեցին ներկաներին եւ արժանացան բուռն ծափողջոյնների: Որպէս սոյն բաժնի սկիզբ՝ Թանգիկ Միրզախանեանի եւ Հարմա Կարապետեանի կատարմամբ հնչեց զուգերգ՝ նկարած Նոր Զուղայի «Արարատ» Միութեան Սկաւտական Միաւորին, որի բառերի հեղինակն է հոգձ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, իսկ երաժշտութեանը՝ Հարմա Կարապետեանը: Ապա Լաուրա Խուրաբախշեանն ասմունքեց Վարանդի «Հայկ դիւցազն» ստեղծագործութիւնից մի հատուած, որին յաջորդեց միաւորի Գայլիկ եւ Արծիկ հատուածների ելոյթը՝ «Ազգ իմ փառապանծ» եւ «Ո՛չ, չեն մեռնում հերոսները» երգերի կատարմամբ: Գայլիկ-արծիկների խմբական կատարումների ընթացքում «Ախպէրս ու ես»-ը երգեց Դիւն Յովհաննիսեանը, իսկ սոյն հատուածների խօսքն ընթերցեց Նինէ Բարդեանը:



այդ սփիւռքածին սերունդն ամէն հնարաւորութիւն ունէր տարբեր ընտրանք կատարելու, կեանքի մէջ յաջողելու, երիտասարդական թափով նւաճումներ իրականացնելու եւ Հայաստանն ու հայութեանը համաշխարհային պատւանդանին բարձրացնելու համար, սակայն ազատ, անկախ եւ միացեալ Հայաստա-

Երեկոն աւարտեց Լիսբոնի հինգ մարտիկների նկարած երգով, որը կատարեցին Վեհանուշ Խուրաբախշեանը, Թանգիկ Միրզախանեանը եւ Հարմա Կարապետեանը:

ԱՊՐԻԼԵԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԳՑ-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՌԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻԱԾ ՄՐՅՈՅԹՆԵՐԻ ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇՇՈՒՄ

Չորեքշաբթի՝ 2013 թվականի յուլիսի 24-ի երեկոյան, Ապրիլեան Եղեռնի ԳՑ-ամեակի Ոգելոյման Ծահինշահրի Յանձնախումբն իր ծրագրերի շարանն եզրափակեց Ապրիլեան Եղեռնի զոհերին նվիրած գիտելիքների և մարզական մրցութիւնների յաղթողների մրցանակաբաշխումով, որին ներկայ էին Ծահինշահրի հոգետր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը, Ծահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան անդամները, մրցութիւնների մասնակիցները և նրանց ծնողները:



Ծրագրի բացումը կատարեց Յանձնախմբի անդամ տկն. Վիոլէթ Յարութիւնեանը: Նա բարի գալստեան խօսքերից յետոյ, նկատի ունենալով յուլիսի 27-ին Լիսբոնի հինգ մարտիկների սիրագործութեան և նահատակութեան յիշատակի օրւայ մօտալուտ լինելը, միջոցառումը նվիրած յայտարարեց նրանց և ամփոփ բացատրութեամբ ներկայացրեց 5 հայորդիների անձնագրութիւնը՝ ասելով. «Ուղիղ 30 տարի առաջ, 1983 թվականի յուլիսի 27-ին, յիբանանահայ 5 հայորդիներ աշխարհին եւս մէկ անգամ հասկացրին, որ միլիոնաւոր հայ անմեղ զոհերի վրէժխնդրութեան ջահակիրն է նաեւ ներկայ սերունդը: Նրանց յուսանկարի մօտ գրեւծ է. «Թող այս դէմքերն ընդմիշտ դրոշմւեն իւրաքանչիւր հայի յիշողութեան մէջ», իսկ մեծանուն բանաստեղծ Յովհաննէս Շիրազը նրանց կոչեց «Լիսբոնի ողջակէզներ», պատգամելով հայութեանը՝ երբէ՛ք չմոռանալ այս զոհաբերութիւնը, եւ նրանց

վառած արդարութեան ջահը տանել մինչեւ վերջ»: Տկն. Յարութիւնեանը շարունակեց. «Հայ ժողովուրդն իր հոգում խորը հոգեհանգստեան պաշտօն է կատարում եւ խոնարհուում է ազգի ու Հայրենիքի ազատութեան եւ անկախութեան բազինին զոհաբերած ողջակէզների՝ Արայի, Վաչէի, Սիմոնի, Սեդրակի եւ Սաքոյի յիշատակի առջեւ»:



Ապա տկն. Յարութիւնեանը հրաւիրեց հոգշ. Հայր Սուրբին, Յանձնախմբի նախագահ արն. Ջանիկ Թահմազեանին և Համայնքի Վարչութեան անդամ արն. Սարո Ծահմիրզայեանին՝ Ապրիլեան Եղեռնի զոհերին նվիրած գիտելիքների և մարզական մրցութիւնների յաղթողների մրցանակները յանձնելու:

- Մրցանակները տրեցին ըստ հետեւեալի.
- Գտիելիքների մրցութիւն**
- Տարրական օղակ**
- Ա կարգ՝ Արցախ խումբ (Դերիկ Թահմազեան, Վաչէ Քեշիշեան, Նազելի Մարկոսեան)
- Բ կարգ՝ Արարատ խումբ (Նարեկ Փանոսեան, Արմէն Քեշիշեան, Արգիշտ Նազարեան)
- Գ կարգ՝ Սեւանա խումբ (Ալիքա Թորոսեան, Վանէ Թահմազեան, Սերլի Ղարախանեան)
- Ուղեցոյց օղակ**
- Ա կարգ՝ Սեւան խումբ (Նունէ Անդրէասեան, Նարէ Մարկոսեան, Լէոնի Դանիէլ)
- Բ կարգ՝ Արծիւներ խումբ (Նելի Դանիէլ, Նոյեմի Առաքելեան, Մելիսա Խանմելիքեան)
- Սեղանի թեմիս**
- Օղջկանց երեցներ**
- Ա կարգ՝ Հելէն Նալբանդեան
- Բ կարգ՝ Մարինա Մանասէրեան
- Գ կարգ՝ Հերմիկ Մանուկեան
- Տղայոց երեցներ**
- Ա կարգ՝ Զարեհ Մարկոսեան
- Բ կարգ՝ Մասիս Մանուկեան

Գ կարգ՝ Էդիկն Փիլոսեան
Տղայոց պատանեկան
 Ա կարգ՝ Արին Քեշիշեան
 Բ կարգ՝ Ծիրակ Հախնազարեան
 Գ կարգ Ջայա Ռաշա

Մարզական մրցութիւնները վարելու համար գնահատուցին Անաշէ Բաբունեանը եւ Մասիս Մանուկեանը:

Ապրիլեան Եղեոնի Յանձնախմբի 10-գոյի եւ պլակատների պատրաստման համար պարգետարուցին Արութին Հախնազարեանը, Անիթա Բարժեանը եւ Նինարէ Յովսէփեանը:

Ձեռարեստի ցուցահանդէսի համար պարգետարուց Յովակ Թահմազեանը:

Բեմայարդարման աշխատանքների եւ ասմունքելու համար գնահատուցին Էլինա Փիլոսեանը, Ադանա Ալազեանը եւ Արայիկ Թահմազեանը:

Մրցանակները յանձնելուց յետոյ, հրաւիրեց հոգշ. Հայր Սուրբը՝ ծրագրի եզրափակող խօսքն արտայայտելու, ով իր խօսքն ուղղելով աշակերտներին,

ասաց. «Այսօրւայ ձեր ստացած նւէրներն ու գնահատագրերը մրցութիւններում յաղթելու համար չեն, այլ դրա համար, որ դուք այս տարիքում մասնակցելով Ապրիլեան Նահատակների յիշատակին կազմակերպած մարզական եւ մշակութային մրցութիւններին՝ ձեր կոչը, վրէժը, պայքարը եւ խօսքն ուղղեցիք աշխարհին, թուրքին եւ բոլոր նրանց՝ ովքեր կասկածում են հայի կամքի, գորութեան եւ նկարագրի վրայ»: Հոգշ. Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ նաեւ Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի գնահատանքի պատգամը փոխանցեց մրցութիւններին մասնակցած անձանց եւ շարունակեց՝ ասելով. «Այն անձը, որ հաւատ ունի իր գործի նկատմամբ՝ նա յաջողութիւններով է պսակելու իր կեանքը: Եւ ես վկայում եմ, որ Շահիշահի հայ համայնքն ունի տեսիլք, հաւատ եւ նպատակ: Ուշադրութիւն դարձրէք Լիբանոնի հինգ մարտիկերի գոհագործութեան վրայ. նրանց նպատակն եղաւ այն, որ հայի կամքն եւ ուժը կարելի է դրսեւորել նոյնիսկ հինգ հոգով՝ յանուն արդարութեան եւ իրաւունքների վիրատիրացման»: Հոգշ. Հայր Սուրբը գնահատեց Ծահինշահի հայ համայնքի անդամներին եւ յատկապէս երիտասարդներին՝ ովքեր առոյգ, ժրաջան եւ աշխուրջ կերպով մասնակից եւ աջակից են համայնքային զանազան աշխատանքներին եւ միակամ հաւաքական գործունէութեան մէջ:

ԱՆՈՒՇԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԴՎԱՆՆԵՐԱԿՆԵՐ ԾԱԿԻՆՏԱԿՐՈՒՄ

Նախաձեռնութեամբ Ծահինշահի «Հայ Մօր Տարւայ» Յանձնախմբի, Կիրակի՝ 2013 թականի յուլիսի 4-ի երեկոյեան, Ծահինշահի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի փոքր սրահում բացումը կատարեց անուշեղէն պատրաստելու դասընթացքի, որին ընդառաջել էին 60-ից ատէլի համայնքի հայ կանայք եւ աղջիկներ: Սկզբում տկն. Վարդուհի Պօղոսեանը բարի գալուստ մաղթեց մասնակիցներին, ակնկալելով ունենալ յաջող եւ շահաւէտ դասընթացների պահեր, ապա խօսքը յանձնեց Յանձնախմբի նախագահ Ծահինշահի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա Վրդ. Գունանեանին, ով շնորհակալութիւն յայտնեց նախ Յանձնախմբի անդամներին, ովքեր նկատի ունեանլով հայ կանանց նախասիրութիւնները, կազմակերպել էին այս դասընթացները, ապա մասնակից կանանց եւ աղջիկներին՝ յայտարարութեանն անսալու եւ Յանձնախմբի ծրագրերին ընդառաջելու համար: Հոգշ. Հայր Սուրբը յոյս յայտնեց, որ կազմակերպած աշխատանքը մնայուն կերպով կը շարունակի եւ բազմակողմանի զարգացումներ կունանայ: Նա աղօթեց, որ նոյն օրինակով՝ քաղցրութիւն տիրի իւրաքանչիւր մասնակցի ընտանական կեանքի մէջ:



Յարկ է նշել, որ սոյն ծրագիրը ղեկավարում է տկն. Ժարմինէ Աղուրեանի միջոցով, ով անուշագործութեան արհեստի համալսարանական մասնագիտական ճիւղ է աւարտել:

Ծրագրի յաջորդ բաժնում, տկն. Ժարմինէի բացատրութեամբ պատրաստեց առաջին անուշեղէնը: Առաջին դասապահը տեսեց երեք ժամ:

Սոյն ծրագիրը տեղի է ունենալու շարունակաբար՝ շաբաթական մէկ օր, եւ ամէն անգամ իւրաքանչիւր անուշեղէնի բաղադրատոմսը դասատուի կողմից նախապէս պատրաստած՝ բաժանելու է մասնակիցներին:

«ԱՄԵՐԻԿԱԾԻ ՓԵՍԸՅՈՒ» ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆ ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՇԱԿՐԱԾԱԿՐՈՒՄ ԵՒ ՆՈՐ ԶՈՒՂԱՌՈՒՄ



Հինգշաբթի՝ 2013 թականի օգոստոսի 8-ի երեկոյան Ծափնշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում, եւ շաբաթ՝ օգոստոսի 10-ին Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում բեմականացւեց Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ծափնշահրի Մասնաճիւղի Մշակութային Միատրի «Յակոբ Պարոնեան» թատերախմբի միջոցով «Ամերիկացի Փեսացու» կատակերգութիւնը, որի հեղինակն է պրն. Ազատ Մաթեանը: Բեմադրիչն էր Ռազմիկ Մարկոսեանը:

Յարութիւնեանի միջոցով, ով բարի գալստ մաղթեց ներկաներին, Նշելով, որ «Յակոբ Պարոնեան» թատերախումբն ամիսներ տքնաջան աշխատանքից յետոյ ներկայացնելու է իր երկրորդ ներկայացումը, ապա ամփոփ կերպով ներկայացրեց կատակերգութեան հեղինակ Ազատ Մաթեանի կենսագրութիւնը, ըստ յետեւեալի. «Գրող, գրականագէտ, թարգմանիչ եւ բանաստեղծ Ազատ Մաթեանը ծնւել է 1942 թվականին, Թեհրանում: Բարձրագոյն ուսումն ստացել է Ֆրանսիայի Սորբոնի համալսարանում եւ ուսումն աւարտելուց յետոյ ստացել է Ֆրանսիական գիտութիւնների դոկտոր-պրոֆեսորի աստիճան: Երկար տարիներ դասաւանդել է Սպահանի Պետական Համալսարանի Հայոց Լեզուի եւ Գրականութեան Ամբիոնում: Նա պարսկերէնի է թարգմանել Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան»-ը, որի համար արժանացել է Հայաստանի Հանրապետութեան նախագահի կողմից պարգևի, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան Մշակոյթի Նախարարութեան կողմից՝ Մաշտոցի անւան շքանշանի»:



Ծափնշահրում, ծրագրին ներկայ էին Ծափնշահրի հոգեւոր տեսուչ հոգ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, հոգեւոր հովիւ արժն. Տ. Վարդան քինյ. Աղաբաբայեանը, Հայ Համայնքի Վարչութեան անդամները, հրաւիրեալները եւ ամբողջ սրահը լցրած հայորդիներ, իսկ Նոր Զուղայում՝ Թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, քահանայ հայրերը, ազգային մարմինների ներկայացուցիչները, կատակերգութեան հեղինակ պրն. Ազատ Մաթեանը եւ մեծ բազմութեամբ ներկաներ:



Շարունակութիւնը՝ 15-րդ էջում

ՍՈՒՐԲ ԱՍՏԻԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԸ ԸԱՎԻՆՇԱՎՈՒՄ

Կիրակի՝ 2013 թականի օգոստոսի 18-ի առաւօտեան, Ծափինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տեղի ունեցաւ սուրբ եւ անմահ Պատարագ Ս. Աստուածածանի Վերափոխման տօնի առիթով: Պատարագիչն էր Ծափինշահրի հոգեւոր տեսուչ հոգօ. Տ. Անանիա Վրդ. Գունանեանը, իսկ Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ծափինշահրի «Նարեկ» երգչախումբը:



Հոծ բազմութեամբ ներկայ էին հաւատացեալ հայորդիներ, ովքեր իրենց առատ նւիրատութեամբ եկեղեցու դասի մէջ տեղադրած սեղանները լցրել էին խաղողի ողկոյզներով, որոնց դասատրութեան եւ վերջում բաժանման գործով զբաղւեցին Ծափինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութեան անդամները:

Պատարագիչ Հայր Սուրբն իր քարոզի մէջ շատ գեղեցիկ անդրադարձ ունեցաւ օրւայ խորհրդին եւ վեր առնելով Ս. Կոյս Մարիամի առանձնայատկութիւններն ու առաքինութիւնները՝ ասաց. «Սուրբ Կոյս Աստուածածինն աշխարհի Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի մայրը լինելով, միաժամանակ, դարձել է հայ մօր գեղեցկագոյն տիպարն ու օրինակը: Նա երկնքում իւրաքանչիւրիս համար բարեխօս է հանդիսանում իր Որդու մօտ, Ով չուզեց, որ իր սուրբ մօր մարմինը երկրի վրայ եւ հողի մէջ փտուիլին տեսնի. Ս. Կոյսի մարմինը չփոշիացաւ ու հողի չվերածւեց եւ իր Որդու՝ Յիսուս Քրիստոսի շնորհիւ երկինք վերափոխւեց»: Հոգօ. Հայր Սուրբը նշելով, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի կողմից 2013 տարին հռչակւել է «Հայ Մօր Տարի», շարունակեց. «Ս. Կոյս Մարիամ Աստուածածնի մասին խօսելով՝ յաճախ մեր մտքի մէջ պատկերւում է նաեւ հայ մայրը, ով իր շուրթերով եւ բերանով միայն ու միայն օրհնութիւն պէտք է բաշխի՝ սուրբ Կոյսի օրինակով, իր ձեռքերը պէտք է օկտագործի բարիք գործելու եւ աղօթք անելու համար, եւ բարիք, սէր, յոյս եւ հաւատ սերմանի իր ընտանիքի ու գաւազների կեանքի մէջ: Արտասուք չպէտք է հոսի հայ մօր աչքերից, եթէ ոչ՝ միայն ուրախութեան արտասուք»: Պատարագիչ Հայր Սուրբն

իր քարոզի շարունակութեան մէջ ասելով, որ տօնի առիթով նւիրաբերած կանաչ եւ կարմիր խաղողները խորհրդանշան են կեանքի եւ Քրիստոսի արեամբ նոր կեանքի, աղօթեց՝ «Թող այսօրւայ խորհրդով, երբ բոլորս մեկնենք մեր տները, օրհնւած այս խաղողների միջոցով Ս. Պատարագի լոյսն ու օրհնութիւնը սփռւի իւրաքանչիւրիս տան մէջ, եւ մեզ բերի առողջութիւն, յաջողութիւն, ուրախութիւն եւ աստուածահաճոյ կեանք»: Ապա իր եւ Ծափինշահրի Հայ Համայնքի Վարչութեան անունից շնորհաւորեց բոլոր նրանց՝ որոնց անւան տօնն էր, յատկապէս Մարիամ անուն ունեցողներին, եւ աղօթք բարձրացնելով սուրբ Կոյս



Մարիամ Աստուածածնին՝ ասաց. «Ո՛վ Կոյս Մարիամ, դու որ բարեխօսն ես իւրաքանչիւրիս, այստեղ հաւաքւածներս ծունկի գալով քո սրբութեան առաջ, քեզ խնդրում ենք օգնական եւ օրինակ եղիր բոլոր այն մայրերին՝ ովքեր գաւազներ ունեն եւ զբաղւում են նրանց դաստիարակութեամբ, որպէսզի նրանք մեծանան ու սնւեն քո Սուրբ Որդու օրինակով, պաշտպանի՛ր եւ տիրութիւն արա նրանց: Ո՛վ Աստուածամայր, քո որովայնի պտուղի՝ Յիսուս Քրիստոսի օրհնութեամբ գաւազ շնորհի՛ր այն կանանց՝ ովքեր առ այսօր գաւազ ունենալու ուրախութեանը չեն արժանացել: Խնդրում ենք՝ բարեխօսիր մեզ համար մեր Աստծու մօտ, որպէսզի ներւեն մեր մեղքերը եւ ջնջւեն մեր յանցանքները: Օգնի՛ր մեզ, ձեռքդ երկարիր եւ բուժիր մեր ցաւերն ու վէրքերը: Թող այս օրհնւած խաղողը մեր տներում լինի քո ներկայութեան հայելին եւ բոլոր ճաշակողների համար՝ օրհնութիւն, առողջութիւն, փափագների իրականացում եւ մանաւանդ ցոյց տայ մեզ Քրիստոսի ճանապարհը, որը տանում է դէպի փրկութիւն»:

Հաւատացեալներն ստացան Ս. Հաղորդութիւն եւ ապա Ս. Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Խաղողօրհնէքի արարողութիւնը եւ ներկայները մօտենալով՝ ստացան իրենց բաժին հասնող խաղողը եւ դրա հետ աստուծային օրհնութիւնը տարան իրենց տները:

ԻՐԱՆԱՀԱՅ ՌԻՍԱՆՈՂԻ ԲԱՅԱՌԻԿ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ՝ ՔԻՄԻԱՅԻ ՈՒՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԲԱՅԱՅՅՅՏՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ



Վերջերս իրանահայ երիտասարդ ճարտարագետ Նորվան Քեշիշեանի բացառիկ յաջողությունը՝ նաև հեղուկների առնչությամբ կատարած մի շարք ուսումնասիրությունների շնորհածոմ, ընդունեց որպես բացալայտում, ինչը մեծ պատիւ բերեց ո՛չ միայն նրան, այլև՝ իրանահայությանը:

Նորվան Քեշիշեանը ծնել է 1987 թականի յունիսի 15-ին, Նոր Զուղայում: Տարրական, ուղեցոյց եւ միջնակարգ կրթությունն ստացել է Նոր Զուղայի հայոց ազգային դպրոցներում՝ աչքի ընկնելով որպէս գերազանցիկ աշակերտ, իսկ նախահամալսարանականը՝ «Փուլեանդեգան» պարսկական դպրոցում:

Նա 2005 թականին ընդունել է Ծահրեզայի Ազատ Համալսարանի քիմիայի ճարտարագիտության ճիւղում՝ «Պետրոքիմիա» թեքումով, եւ գերազանց միջինով ասարտել 2009 թականին՝ լիսանսի աստիճանով:

Այնուհետեւ ուսումը շարունակելով գերլիսանսի մակարդակում Սպահանի Արդինաքերական Համալսարանի քիմիայի ճարտարագիտության ճիւղում՝ «Փոխանցման երեւոյթները» թեքումով, ճոյնպէս յաջողել է ստանալ գերազանցիկ շրջանաւարտի կոչում: Նորվանը 2013 թականի մարտին պաշտպանել է իր գերլիսանսի ասարտաճառը, որը առնչում է նախտեխնոլոգիայի ոլորտին՝ «Ակտիւ էլեկտրոններ պարունակող եօների զանգւածի փոխադրումը՝ էլեկտրոլիտային նախտեղուկում» խորագրով եւ արդիւնքում արժանացել քսան գնահատականի:

Վերջին տարիների ընթացքում գիտնականները տարբալուծարանային պայմաններում լուրջ հետազօտական աշ-

խատանքներ են նախաձեռնել ջերմութեան փոխադրման հարցում նախտեղուկների դերակատարութեան բացալայտման կապակցութեամբ, եւ սոյն փոխադրման երեւոյթներում առկայ նմանութիւնները պատճառ են հանդիսացել, որ գիտաշխատողների մօտ առաջանայ հետեւեալ հարցը՝ արդեօք նախտեղուկները ճոյնպէս դերակատարութիւն ունե՞ն զանգւածների փոխադրման մէջ թէ ոչ: Նորվան Քեշիշեանը եւ իր խորհրդատու դասախօս պրոֆ. Նասր Հսֆահանին անդրադառնալով վերոնշեալ տեսակէտին՝ տարբեր հետազօտութիւնների կիրառմամբ կարողացել են առաջարկել այնպիսի մեխանիզմներ, որոնցով կարելի է արդարացնել զանգւածի աճման եւ նւազման ընթացքը՝ նախտանսիկների ներկայութեամբ: Սոյն գիտահետազօտական աշխատանքի արդիւնքը ո՛չ միայն գիտաշխատողների ուշադրութեան առարկայ է դարձել՝ որպէս նոր բացալայտում, այլև արժանացել է բազմաթիւ գնահատականների:

Նորվանն իր ասարտաճառի ճիւթի ուսումնասիրման ընթացքում մասնակցել է մի շարք գիտական համագումարների եւ միջնեւ օրս իր ասարտաճառի կապակցութեամբ կազմել է երկու հեղինակային յօււածներ, որոնցից առաջինը շուտով տպագրելու է «International communications in heat and mass transfer» գիտական թերթում, իսկ երկրորդը ճոյնպէս փոխանցել է մի այլ պարբերաթերթի հրատարակման համար:

Այս փալլուն յաջողութիւնից յետոյ, Նորվան Քեշիշեանը ցանկանում է իր ուսումը շարունակել աշխարհահռչակ համալսարաններից մէկում, որտեղ կարող է օգտւելով պատկան համալսարանի հնարաւորութիւններից՝ իր գիտելիքների մակարդակն առաւել բարձրացնել տեսական եւ փորձնական առումներով:

Այս բացառիկ յաջողութեան կապակցութեամբ շնորհաւորելով Նորվան Քեշիշեանին եւ նրա ծնողներին, երիտասարդ ճարտարագետին մաղթում ենք նորանոր ձեռքբերումներ ու նաճումներ՝ կեանքի բոլոր ասպարէզներում:



Շարունակուիին՝ 13-րդ էջից

«ԱՄԵՐԻԿԱՅԻ ՓԵՆԱՅՈՒՒ» ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅԱՆ...

Բեմադրութիւնը ներկայացնեց երեք վարագոյրով, որի ընթացքում իրենց դերերը գեղեցկօրէն ներկայացրին 16 դերասաններ: Սոյն ներկայացումը վառ ապացոյցն էր լուրջ եւ մեծ աշխատասիրութեան, որով թատերախումբը կարողացաւ ներկաներին գոնէ մի քանի ժամ անջատել առօրեայ հոգսերից եւ շօշափելով թէեւ հալութեանն ու հալկականութեանն սպառնացող լուրջ մտահոգութիւն, սակայն եւ այնպէս խիւղ ու ծիծաղ պարգետել հանդիսատեսին:

Ծահինշահրում բեմադրութեան ասարտին բեմ հրաւիրեց հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը՝ եզրափակիչ խօսքը փոխանցելու. նա գնահատեց թատերախմբի իւրաքանչիւր անդամի աշխատասիրութիւնը, յատկապէս վերջին օրերում: Գնահատեց նաեւ բեմադրիչի աշխատանքը եւ բոլորին ցանկացաւ առաւել վերելք իրենց աշխատանքի մէջ. կարելի է ասել հնչեցին միայն եւ միայն գնահատանքի խօսքեր:

Նոր Զուղայում, եզրափակիչ հանգրւանում, իր գնահատանքի խօսքն արտալայտեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ապա ծաղիկներով գնահատեցին թատերախմբի իւրաքանչիւր անդամ եւ Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ծահինշահրի Մասնաճիւղի Մշակութային Միաւորի անդամները, իսկ կատակերգութեան հեղինակ պրն. Ազատ Մաթեանը եւ բեմադրիչ պրն. Ռազմիկ Մարկոսեանը գնահատեցին յուշանւերներով:

Ներկայացման բեմադրարներն էին հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, Ռազմիկ Մարկոսեանը, Սարո Ծառուկեանը, Ալիս Մկրտչեանը, Մատիթա Վարդանեանը, Լիդուշ Քամարգարեանը, Ալդա Մուրադեանը եւ Արմինէ Թահմազեանը: Զայնի եւ լոյսի պատասխանատուներն էին պրնք. Ասպետ Սիմոնեանը, Էդիւն Բաբումեանը եւ Մարտիկ Յովհաննիսեանը: Բեմադրութեան ընթացքում յուշարարի դերում էր Մատիթա Վարդանեանը իսկ ծրագրի յայտարարութեան ձեւակերպումը (ծաղրանկարը) պատրաստել էր Սամիկ Հախնազարեանը:

ՆԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Զ. Հայոց Առաքելական Եկեղեցեայ Վարչութիւն

Ս. Գէորգ Եկեղեցի

- 500,000-ական դիալ. Նորիկ Ալլահվերդեան, Օշին Սահալեան:

- 200,000 դիալ. ոմն:

Խաչի ցոյգելու փոխան

- 100,000-ական դիալ. Պերճիկ Խուդավերդեան:

Ջանազան առիթներ

- Մէկ փոշեկով. Մկրտչեան ընտանիք՝ Գալստան Մկրտչեանի յիշատակին՝ Ս. Մինաս եկեղեցուն:

- Մէկ պատի ժամացոյց. Ռոբերտ Դալթեան՝ Յարութիւն Դալթեանի յիշատակին՝ Ս. Յովհաննու եկեղեցուն:

Հանգուցեալ Գրիշ Պարսամեանի յիշատակին

- 500,000 դիալ. Ծահինջահրի Հայ Համայնքի Վարչութիւն:

- 300,000 դիալ. Փերիոյ Կրթասիրաց Միութեան Ծահինջահրի Մասնաճիւղ:

- 200,000 դիալ. Գալստան եւ Սեդա Փանոսեաններ:

- 150,000 դիալ. Մէլքոն Ծիրանեան:

- 100,000-ական դիալ. Բաղդասար Դիլանջեան, Տիգրան Քեչիշեան, Մասիս Քեչիշեան, Անուշաւան եւ Հրանուշ Աղաբաբայեան, Լուսիկ Միրզախանեան, Արսիկէ Մարգարեան:

- 60,000 դիալ. Մուշեղ Ղարիբեան:

- 50,000-ական դիալ. Գեօրի Անջուլեան, Համազ Մարգարեան:

Հանգուցեալ Ովսան Տէր Գրիգորեանի յիշատակին

- 500,000 դիալ. Վահիկ Ունանեան:

- 200,000-ական դիալ. Հայ Ուս. Չհարմահալ Միութիւն, Երևանի Պողոսեան, Ջարեմ եւ Լորեթա Ասատրեաններ:

- 150,000 դիալ. Փերիոյ Կրթասիրաց Միութիւն:

- 100,000-ական դիալ. Գասպար Մարտիրոսեան, Սոնիկ Զոհրաբեան, Լուսիկ Մարտոյեան, Հայրապետ Եսայեան:

Հանգուցեալ Յարութիւն Դալթեանի յիշատակին

- 600,000 դիալ. Վրէժ Յովսէփեան:

- 500,000 դիալ. Արթին Դալթեան:

- 200,000-ական դիալ. Գալստան Թորոսեան, Արա Ամրանեան, Հայկուշ Խաչիկեան, Արտուշ Մելիքեան, Դալթի եւ Սիւնէ Յովսէփեաններ, Տիգրանուհի Ղեւեան:

- 150,000-ական դիալ. Հմայեակ Յովսէփեան, Արմէն Յովսէփեան:

- 100,000-ական դիալ. Կանանց Հոգեւոր Լսարան, Արա եւ Հոփսիկ Սիմոնեաններ, Գրիգոր Յովսէփեան:

Հանգուցեալ Սայրի Պողոսեանի յիշատակին

- 500,000-ական դիալ. Հրաչիկ Ամրանեան, Նորիկ Մարկոսեան:

- 200,000-ական դիալ. Աշխէն Մկրտչեան, Արա Ամրանեան:

- 100,000-ական դիալ. Տիգրան Քեչիշեան, Ռազմիկ Մարկոսեան, Լուսիկ Մարտոյեան, Նարդ Կիրակոսեան:

Ն. Զ. Հայ Կանայ Գրութեան Միութիւն

Ազգային Մեքանոց

- 15,000,000 դիալ. ոմն (Թեմերան):

- 10,000,000 դիալ. Գեղամ Յարութեանեան՝ իր թոռան՝ Ադրիկ Ջաքարեանի յիշատակին:

- 3,000,000-ական դիալ. Հայրուկ եւ Արմիկէ Մովսիսեաններ, Անդրէ եւ Այդա Մելիք Ստեփանեաններ՝ իրենց հօր՝ Ասլան Մելիք Ստեփանեանի մահուան 2-րդ տարեկիցի առիթով:

- 700,000 դիալ. Փարիսա Ղոսի:

- 500,000-ական դիալ. Վերժիկ Գրիգորեան՝ իր մօր՝ Արշալոյս Քիւիշեանի յիշատակին, Փառանձեմ Յարութեանեան:

- 300,000-ական դիալ. Անուշ Փիլոսեան՝ իր քրոջ եւ նրա ամուսնու՝ Խաթունիկ Փիլոսեանի եւ Աւետիք Ղարախանեանի մահուան յիշատակին, Վիկուշ Գորգիսեան:

- Այլ նւերներ. Վիկուշ Գորգիսեան, Փարիսա Ղոսի, Սոնա Թումաթարեան, Երան Միրզայեան, ոմն, ոմն՝ պարսիկ եւ պարսկուհի:

Ղառողուն Գիւղի Ս. Նշան Եկեղեցու Վարչութիւն

- 8,000,000 դիալ. Վազրիկ Մարկոսեան:

- 5,000,000 դիալ. Նորիկ Մարկոսեան:

- 1,200,000 դիալ. Ռաֆիկ Յակոբեան:

- 1,000,000-ական դիալ. Այդա Սիմոնեան, Յայրօ Քեչիշեան, Գարեգին Արմէնեան:

- 500,000-ական դիալ. Սիմիկ Դիլանջեան, Արտուշ Պողոսեան, Ծահէն Թահմազեան:

- 300,000 դիալ. Հրայր Աբէլեան:

- 200,000 դիալ. Մատթէոս Պարսամեան:

Ս.Ա. Վանի «Կոմիտաս» Երգչախումբ

- 10,000,000 դիալ. Արիս եւ Արմէն Նադիրեաններ՝ իրենց մօր՝ Էլբիս Ջարգարեանի (Նադիրեան) յիշատակին՝ փոխան հոգեճանջի:

Ս. Մինաս Եկեղեցի

- 5,000,000 դիալ. Արիս եւ Արմէն Նադիրեաններ՝ իրենց մօր՝ Էլբիս Ջարգարեանի (Նադիրեան) յիշատակին՝ փոխան հոգեճանջի:

Օանդ Հիանդների Ցոնդ

- 1,000,000 դիալ. Ն.Զ. Հայոց Ազգային «Կատարիսեան» եւ «Քանանեան» դպրոցների տեսչութիւն եւ Ծնողական Խորհուրդ՝ Յարութեան Դալթեանի յիշատակին:

- 800,000 դիալ. Ն.Զ. Հայոց Ազգային «Կատարիսեան» դպրոցի տեսչութիւն եւ Ծնողական Խորհուրդ՝ Եսայի Վարդաբեանի յիշատակին:

Առաջնորդարանին եւ ազգային կառույցին առնչող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող լուրերը՝ «Ալիք»-ի թղթակցները, «Արարատ» Միութեան առնչող լուրերը՝ օրդ. Երանուշ Թահմազեանը, իսկ Շահինջահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները տկն. Այլին Քեչիշեանը:
Որոշ ծրագրերի լուսանկարները տրամադրւրել է պրն. Գեւրիկ Խաչատրեանը:

ՄԵՐ ՆԱՍՅԷՆ
خليفة گري ارامنه جلفای اصفهان
و جنوب ایران
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵
Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com
Tel: +98 311 6243471-2
Fax: +98 311 6270999

30



27
30 ИЮНЬ
1983
1945

У
У
Т
У
У